

Եղիշե Չարենց

## ՀԵՌԱՑՈՒՄԻ ԽՈՍՔԵՐ

Իմ աչքերի մեջ այնքան կրակներ եմ մարել ես  
Եվ հոգուս մեջ, հուսահատ, այնքան աստղեր եմ մարել:  
Կյանքս, որ հուշ է դարձել, հեռանալիս չանիծես.  
Կյանքս կանցնի, կմարի — բայց երգս կա, կապրի դեռ:

Կյանքս կանցնի, կմարի, որպես կրակ ճահիճում՝  
Աննպատակ ու տարտամ, անմխիթար ու անհույս:  
Երգերիս մեջ — դու գիտես — ինձ ոչ ոք չի ճանաչում՝  
Կարծես ուրիշն է երգում կապույտ կարոտը հոգուս:

Հավիտյան գոց ու անխոս՝ թափառել եմ ու լռել.  
Ոչ ոք, ոչ ո՞ր չգիտե՞՛ արդյոք ինչ է կյանքս, ես.  
Միայն գիտեն, որ կյանքում ինչ որ երգեր եմ գրել,  
Ինչպես գիտեմ, որ դու կաս, որ սիրում է մեկը քեզ:

Ես երգել եմ քո հոգին, քո ժպիտը լուսավոր,  
Քո աչքերի, քո դեմքի տխրությունը սրբազան.  
Կյանքս թողած անհունում — ես երգել եմ սերը խոր  
Ու կարոտը թևերիս, որ երբեք քեզ չհասան...

Մոտենում է, քոյր իմ, անի, իրիկունս միգամած.  
Ես ինչ անեմ, որ հոգիս չհեծկլտա կարոտից.  
Ինչպես, ինչպես ընդունեմ կյանքիս բաժակը քամած,  
Որ ձեռքերս չդողան, որ օրերս ներեն ինձ:

Գուցե՞ հանկարծ կասկածեմ, չհավատամ ինքս, ես,  
Ու սուտ թվա իմ հոգուն քո կարոտը սրբազան...  
— Ինչ էլ լինի, քոյր իմ, քոյր, հեռանալիս չանիծես  
Խեղճ կարոտը թևերիս, որ երբեք քեզ չհասան...

1917

Егише Чаренц

## СЛОВА РАССТАВАНИЯ

Как часто я гасил в своих глазах огни,  
Как часто звезды я в своей душе гасил.  
Но в миг прощания былого не кляни —  
Пройдет, погаснет жизнь, но вечен жизни пыл.

Пройдет, погаснет жизнь болотным огоньком,  
Неясно брезжившим, печальным и немым.  
А песня? Кто поймет, о чем я пел, о ком?  
Печаль моей души достанется другим.

Был молчаливым я. Так мог ли видеть свет,  
Чем жизнь моя была и что такое я?  
Лишь знают, что, мол, жил, писал стихи поэт...  
Вот так же знаю я, чем жизнь была твоя.

Я воспевал тебя, подобную цветку,  
Печаль твоих очей и нежной речи звук,  
Весь растворясь в любви, я пестовал тоску  
Тянувшихся к тебе — увы, напрасно — рук...

Вот приближается туманный вечер мой.  
Что делать мне, сестра, чтоб не рыдать в тоске,  
Как примириться мне с той чашею пустой,  
Которая дрожит в ослабнувшей руке?

Простят ли скорбь мою утраченные дни,  
Во всем, что совершил, не усомнюсь ли вдруг?  
Но как бы ни было, родная, не кляни  
Тянувшихся к тебе — увы, напрасно — рук!

1917